

12252



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Երջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիդյան



«07» 11 2024թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 241 - 24

Նախաձեռնող՝

«ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոյուզնս» ՍՊԸ  
ք. Երևան, Գրիբոյեդովի 11-1

Գործունեությունը՝

Էլեկտրահաղորդալարերի և մալուխների արտադրության  
զարգացում  
ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 241 - 24

« 07 » հուլիսի 2024թ.

«Էլեկտրահաղորդալարերի և մալուխների արտադրության զարգացում» նախագծի  
շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան

**Ներածական մաս.** Պղնձե և այլումինե նախապատրաստվածքներից ձգման եղանակով էլեկտրական հաղորդալարերի ու մալուխների արտադրության ոլորտում մասնագիտացված «Ին-Վի» ՍՊԸ-ն նախատեսում է ընդլայնել իր տեխնիկական հնարավորություններն ու կարողությունները՝ ապահովելով պղնձե և այլումինե էլեկտրական հաղորդալարերի ու մալուխների ամբողջ տեխնոլոգիական ցիկլի իրականացումը՝ ձուլման գործընթացից մինչև պատրաստի հաղորդալարերի և մալուխների պոլիէթիլենային/պոլիվինիլքլորիդային թաղանթապատումը:

Ձեռնարկությունը գտնվում է Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի և Արտաշիայան փողոցների միջնամասում, որի արդյունքում արտադրական հրապարակի շինությունների մի մասը գտնվում է Շիրակի փողոց 3-րդ նրբանցք 5/1, 5/2, 5/3, 5/4, իսկ մյուս մասը Արտաշիայան փողոց 94/8, 94/15, 94/38, 94/39 հասցեներում:

Մոտակա բնակելի տան հեռավորությունը 310 մ է, իսկ հիմնական մթնոլորտային արտանետումների աղբյուրներից՝ այլումինի և պղնձի ձուլման վառարանների ծխնելույզներից, համապատասխանաբար 390 մ և 380 մ:

Հողատարածքի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների, գրանցման իրավունքի տեսակը՝ վարձակալություն:





Հոսանքատար ջրերի միևնույն չափերում այլումինային ջրի զանգվածն ավելի քան 3 անգամ փոքր է պղնձե ջրի զանգվածից:

Արտադրությունում պոլիմերային նյութերը արտամղման են ենթարկվելու օղակային անցքով որպես խողովակ, որը շրջագրվելու է այլումինե հաղորդալարը կամ մալուխը: Պոլիմերները հաղորդալարերի արտադրությունում արտամղման են ենթարկվելու հալված վիճակում: Հոսքագծի հիմնական տեխնոլոգիական հանգույցը էքստրուդերն է, որով կատարվելու է մեկուսիչ կամ փողրակային ծածկույթների վրադրումը, որից հետո այդ ծածկույթները հովացվելու են՝ անցնելով ջրի վաննաներով:

Պատրաստի հաղորդալարերը վերահսկողության պատասխանատուի կողմից ենթարկվելու են լաբորատոր փորձաքննության, ապա հաղորդալարը կտրվելու է հաստատված չափերով, փաթեթավորվելու է պոլիէթիլենով, պիտակավորվելու է:

Պոլիվինալիդիդային առաջնային հումքի արտադրության գործընթացում ելանյութերը խառնվելու են համապատասխան համամասնությամբ 150° C-ի պայմաններում, ապա խառնուրդը հովացվելու է մինչև 150° C, լիցքաթափվելու է: Էքստրուդերային տարողության մեջ խառնուրդը կրկին հալվելու է (150° C-ի պայմաններում) և արտամղվելու է որոշակի եզրաձև ունեցող անցքերով (սովորաբար կլոր) սալիկի միջոցով:

Ընկերությունում տեղադրվելու են այլումինի և պղնձի ձուլման վառարաններ, այդ թվում այլումինի ձուլման համար 500 կգ տարողունակությամբ 1670° C առավելագույն ջերմաստիճանով 400000 կգ/կալ հզորությամբ այլումինի ձուլման 2 գազային վառարան և պղնձի ձուլման համար 3000 տ տարողունակությամբ 315-350 կՎժ/տ հզորությամբ պղնձի ձուլման էլեկտրական ինդուկցիոն վառարան:

Պոլիվինալիդիդային առաջնային նյութի արտադրության համար 500-900 կգ/ժ տարողունակությամբ 50 պ/ր առավելագույն արագությամբ, 45-55 կՎ/ժ էլեկտրաէներգիայի ծախսով ՊՎՔ արտադրող էքստրուդեր:

Ձուլման տեղամասերը, որոնցում տեղադրվելու են այլումինի և պղնձի ձուլման վառարանները, հագեցած են լինելու ծխատարերով, որոնց միջոցով տեղամասերում ձուլման գործընթացից առաջացած գազերը հեռացվելու են մթնոլորտ: Ծխատարերի միջին հեռավորությունը վառարաններից կազմելու է մոտ 10-12 մ:

Ընկերության էլեկտրամատակարարումն իրականացվելու է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից: Ձեռնարկության տարեկան էներգասպառումը միջինում կկազմի 2.3 մլն. կՎտ/ժամ:

Ձեռնարկությունը նախատեսում է իր շինությունների տանիքներին տեղադրել 545.4 կՎտ հզորությամբ արևային էներգիայի ֆոտովոլտային կայան/վահանակներ, որի նպատակով 05.04.2022թ.-ին պայմանագիր է կնքվել ոլորտում մասնագիտացված «Էկո Վիլ» ՍՊԸ-ի հետ: Գազամատակարարումը նախատեսվում է իրականացնել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից: Միջին տարեկան ծախսը կկազմի մոտ 150,000 մ<sup>3</sup>:

Ձեռնարկությունում արտադրական, խմելու և տնտեսական նպատակների համար անհրաժեշտ ջրի մատակարարումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Ձեռնարկության արտադրական կարիքների համար օգտագործվելու է ջրի փակ, շրջանառու ցիկլով/համակարգ: Տեխնոլոգիական գործընթացում օգտագործվող ջրում ուղղվում է արտադրական ջրի ավազան, որտեղ սառեցվելուց հետո նորից օգտագործվում է ջրային



արտադրություն: Գոլորշիացման և այլ կորուստները կոմպենսացնելու նպատակով ջրի փակ շրջանառու համակարգը պարբերաբար լրասնվում է խմելու որակի ջրով: Ընկերության միջին տարեկան ջրապահանջը, հաշվի առնելով նաև նախատեսվող գործունեության իրականացումը, կկազմի մոտ 2500 մ<sup>3</sup>: Արտադրական ջրավազանն իրենից ներկայացնում է 30 մ<sup>3</sup> տարողությամբ երկաթետոնե մետաղական ծածկով ավազան: Շրջանառու ջուրը, արտադրական ավազանից ջրամատակարարման ներքին ցանցի և պոմպի միջոցով, մղվում է դեպի տեխնոլոգիական սարքավորումների հովացման համակարգեր, ապա վերադարձվում ավազան:

Ձեռնարկությունում առաջացած կոմունալ կենցաղային կեղտաջրերը, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի համաձայն, ուղղվելու են քաղաքային կոյուղու համակարգ:

**Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.**

- Ձուլման տեղամասում օդափոխման համակարգի վրա նախատեսված են փոշու զտման/մաքրման տեղակայանքներ:

- Ձեռնարկություն մտնող և ելնող բեռնատարների տեղաշարժը գիշերային ժամերին դադարեցվելու է:

- Շահագործվելու են միայն տեխնիկական սպասարկում անցած և սարքին վիճակում գտնվող բեռնատարներ:

- Սահմանափակվելու է բեռնատար մեքենաների արագությունը Շիրակի փողոցից դեպի Ձեռնարկություն տանող ճանապարհային հատվածում:

- Խստիվ պահպանվելու են սարքավորումների շահագործման հրահանգներով սահմանված տեխնոլոգիական ռեժիմները:

- Արտադրական ստորաբաժանումները կահավորվելու են առաջնային հրդեհաշիջման միջոցներով:

- Աշխատանքներում ներգրավված անձնակազմի հետ անցկացվելու են ուսումնական վարժանքներ՝ ուղղված վթարային իրավիճակի արագ արձագանքմանը:

- Ձեռնարկության արտադրական հրապարակի տարածքում առկա է 258.3 մ<sup>2</sup> մակերեսով կանաչապատ տարածք, որտեղ ընկերությունը նախկինում իրականացրել է ծառատունկ, ընկերությունը նախատեսում է տնկել ևս 74 հատ ծառ:

Ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, ածխածին, ազոտի օքսիդներ, ծծմբական անհիդրիտ) արտանետումների չափումներ՝ եռամսյակը մեկ անգամ:

- Աղմուկի և թրթռման մակարդակների պարբերական մշտադիտարկում՝ թե՛ ձեռնարկության տարածքում, թե՛ զգայուն կլանիչների մոտ, կիսամյակը մեկ անգամ:

- Թափոնների կառավարման մշտադիտարկում՝ շաբաթական մեկ անգամ:

- Աշխատանքի և հրդեհային անվտանգություն մշտադիտարկումներ՝ շաբաթական մեկ անգամ:

**Պատճառաբանական մաս.** Օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում «Էլեկտրահաղորդալարերի և մալուխների արտադրության զարգացում» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության



գնահատման հաշվետվության վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Երևանի քաղաքապետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում և կկրեն ժամանակավոր բնույթ:

**Փորձաքննական պահանջներ**

- Աշխատանքները կատարել՝ պահպանելով աշխատանքի և աշխատողների անվտանգության ապահովման համար սահմանված կանոնները և նորմերը:
- Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
- Կատարել աղետներին հակազդելու համակարգերի պարբերաբար զննումներ, հնարավոր ռիսկերը կանխարգելելու նպատակով:
- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

**ԵՐՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ**

«ԷՅ ԹԻ ԷՍ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Էլեկտրահաղորդալարերի և մալուխների արտադրության զարգացում» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջ. մասնագետ՝



Գոհար Մինասյան